Գործ թիվ ԵԴ2/2940/02/26

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՎԵՃԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ, ԵՋՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԴՌՆՓԱԿ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.04.2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Դ. Օհանյանի (այսուհետև՝ Դատարան), ծանոթանալով «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի անունից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին,

ՊԱՐԶԵՑ

«Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի անունից 17.03.2026 թվականին Դատարան է մուտք եղել հայցադիմում՝ ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի միջև 26.12.2018 թվականին կնքված հմ ՄԱԱՇՁԲ-13-32 ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին 26.02.2026 թվականի թիվ ՊՆ12/342 գրությամբ ներկայացված որոշում (ծանուցումը) և 06.03.2026 թվականի Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 206 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, որը 17.03.2026 թվականին մակագրվել է դատավորին, իսկ դատավորին հանձնվել է 18.03.2026 թվականին:

Դատարանի 23.03.2026 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է՝ սահմանելով եռօրյա ժամկետ հայցադիմումի թերությունները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

Հայցադիմումը ներկայացվել է կրկին 01.04.2026 թվականին, որը 02.04.2026 թվականին մակագրվել է դատավորին, իսկ դատավորին հանձնվել է 03.04.2026 թվականին:

Նախագահող դատավորը 06.04.2026 թվականից 10.04.2026 թվականն ընկած ժամանակահատվածում գտնվել է տարեկան հերթական վերապատրաստման դասընթացների:

Դատարանը, ծանոթանալով հայցադիմումին և կից փաստաթղթերին, արձանագրում է, որ հայցվորը շտկել է Դատարանի 23.03.2026 թվականի որոշմամբ մատնանշված թերությունները և գտնում է, որ կրկին ներկայացված հայցադիմումը և կից փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ, չկան

հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր, հետևաբար հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ նույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին, իսկ 3-րդ մասի առաջին պարբերության համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը նույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը նույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ նույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները. լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին:

Միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասը՝ Դատարանը գտնում է, որ գործը ենթակա է քննության գրավոր ընթացակարգով:

Դատարանը միևնույն ժամանակ արձանագրում է, որ պատասխանողից անհրաժեշտ է պահանջել 26.12.2018 թվականին կնքված հմ ՄԱԱՇՁԲ-13-32 ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին 26.02.2026 թվականի թիվ ՊՆ12/342 գրությամբ ներկայացված որոշման և 06.03.2026 թվականի Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 206 որոշման հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանում գործը քննվում է դռնբաց դատական նիստում, բացառությամբ օրենքով

շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատական վարույթը կամ դրա մի մասը կարող է անցկացնել դռնփակ: 3. Դատական վարույթը կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու հարցը լուծվում է դռնփակության պայմաններում: 4. Դատական վարույթը կամ դրա մի մասը դռնփակ անցկացնելու մասին դատարանը կայացնում է որոշում (...):

Տվյալ դեպքում, Դատարանն արձանագրում է, որ թիվ ԵԴ2/2940/02/26 քաղաքացիական գործով ներկայացվել է Հայցադիմում և կից փաստաթղթեր, որում առկա են գաղտնիք պարունակող տեղեկություններ, որպիսի պայմաններում, սույն գործով դատական վարույթում, ենթակա են հրապարակման, ուստի Դատարանը գտնում է, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդածով սահմանված սույն քաղաքացիական գործով դատական վարույթը դռնփակ անցկացնելու հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով, ինչպես նաև 27.2-րդ և 11.1-րդ գլուխներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի անունից ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Գործը քննել գրավոր ընթացակարգով և դատական վարույթն անցկացնել դռնփակ:
3. Եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի ***27.05.2026 թվականին*** ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
4. Պատասխանող ՀՀ պաշտպանության նախարարությունից պահանջել 26.12.2018 թվականին կնքված հմ ՄԱԱՇՁԲ-13-32 ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին 26.02.2026 թվականի թիվ ՊՆ12/342 գրությամբ ներկայացված որոշման և 06.03.2026 թվականի Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 206 որոշման հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները :
5. Որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
6. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարություն:
7. Հայցադիմումը Դատարան ներկայացված համարել այն սկզբնապես ներկայացնելու օրը:
8. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ ԴԱՎԻԹ ՕՀԱՆՅԱՆ